ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 63

26 դեկտեմբերի 2019 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թ. օգոստոսի 20-ին կայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման պահանջները, ՝Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն՝ կառուցվածքային ստորաբաժանման 2019 թվականի հաստիքացուցակը թողնել անփոփոխ՝ մինչև դատարանի կողմից կայացված վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Գ. Ա. Մուրադյան**